35 Մի՞թե դուք չեք ասում, թե. Դեռ չորս ամիս կա,
և հունձքը կգա: Ահա ես ասում եմ ձեզ.
Բարձրացրե՛ք ձեր աչքերը, և տեսե՛ք արտերը, որ
սպիտակել են և արդեն հնձին հասել: 36 Եվ
հնձողը վարձք է առնում, և հավիտենական կյանքի
մեջ պտուղ ժողովում, որ սերմողը և հնձողն իրար
հետ ուրախանան: 37 Որովհետև սրանում
ճշմարիտ է այն խոսքը, թե Ուրիշ է սերմողը, և
ուրիշ է հնձողը: 38 Ես ուղարկեցի ձեզ հնձել այն,
որ դուք չաշխատեցիք. ուրիշներն աշխատեցին, և
դուք նրանց աշխատանքի մեջ մտաք:

ՀՈՒՆՁՔԸ ՊԱՏՐԱՍՏ Է

1. Ժամանակը թռչում է, և մենք չենք կարող սպասել կատարյալ ժամանակվան:

- *Ժող. 11:4 - Քամուն նայողը սերմ չի ցանի, ամպին նայողը հունձ չի անի:*
- **Մենք չենք կարող թույլ տալ, որ այս կյանքի հանգամանքները դրդեն մեզ ետ նայել:**

Մէկ ուրիշն էլ ասաց. «Քո յետևից կը գամ, Տէ՛ր, բայց նախ թո՛յլ տուր ինձ, որ հրաժեշտ տամ իմ տանը»: Յիսուս նրան ասաց. «Ո՛չ ոք իր ձեռքը մաճի վրայ կը դնի և ապա յետ կը նայի, եթէ յարմար է Աստծու արքայութեանը»

2. Հունձքը մեծ է, սակայն չկան բավականաչափ մշակներ:

- Կան շատ մարդիկ, ում կարելի է փրկության բերել:
  - *Մատ. 9:37 - Այն ժամանակ իր աշակերտներին ասեց. Հունձքը շատ է, բայց մշակները քիչ:*
- Եկեղեցիներ տնկելը հնարավորություն է տալիս բարձրացնելու ավելի շատ մշակներ, որոնք կաշխատեն հունձքի համար: Եկեղեցուն ընդամենը մեկ սերունդ է բաժանում անհայտանալուց:
- Մեջբերում. «Այն սերմը, որը դուք ցանում եք այսօր, հունձք չի տա մինչև վաղը: Այդ իսկ պատճառով, ձեր ինքնությունը չի երևում ձեր ներկա արդյունքներից: Դրանք ցույց չեն տալիս, թե ո՛վ եք դուք, այլ թե ո՛վ եք դուք եղել»: **Ջեյմս Ռեյ**

3. Եկե՛ք միշտ կատարենք Աստծո գործը՝ չսպասելով «ճիշտ ժամանակվան»:

- Ձեր գործն Աստծո համար զուր չէ:
  - *1 Կոր. 15:58 - Ուրեմն, եղբայրնե՛ր իմ սիրելի, հաստատո՛ւն մնացէ՛ք, անշա՛րժ եղէք, ամէն ժամ աւելի՛ն եղէք Տիրոջ գործի մէջ. իմացէ՛ք, որ ձեր աշխատանքը ի զուր չէ Տիրոջ առաջ:*
- Աստծո խոսքը գործում է, նույնիսկ եթե մենք չգիտենք այդ մասին:
  - *Ես. 55:11 - այդպէս էլ պիտի լինի իմ խօսքը, որ ելնում է իմ բերանից.նա դատարկ չի վերադառնալու, մինչև որ չկատարի այն, ինչ կամենում եմ ես:*